


# Ինչպես աշխատել հարթակում

## 1. Սեղմեր վերևի աջ անկյան **Մուտք** կոճակը:



## 2. Եթե արդեն գրանցված եք հարթակում, ապա ձախ կոդում մուտքագրեք Ձեր մուտքաբառը և գաղտնաբառը, հետո սեղմեք **Մուտք** կոճակը:

Եթե դեռ գրանցված չեք կայքում, ապա սեղմեք **Ստեղծել նոր հաշիվ** կոճակը:



## 3. Հարթակում գրանցվելու համար լրացրեք համապատասխան դաշտերը: Այն դաշտերը, որոնք նշված են աստղանիշով պարտադիր են լրացման համար: Սեղմեք **Ստեղծել իմ հաշիվը** կոճակը:

## 4. Գրանցվելուց հետո կստանաք էլ. նամակ Ձեր գրանցումը հաստատելու համար: Հաստատելուց հետո միայն կարող եք մուտք գործել համակարգ:

5. Սեղմեք Ձեր նախընտրած դասընթացի անվան վրա տվյալ դասընթացին մասնակցելու համար:

6. Հաջորդ քայլով սեղմեք **Enroll me in the course** կոճակը:

7. Դասընթացը անցնելու համար նախ պետք է անցնեք նախնական թեստ՝ Ձեր գիտելիքները ստուգելու համար: Նախնական թեստից հավաքած միավորները որևէ կերպ չեն ազդում Ձեր կողմից պարտադիր վերապատրաստման ժամեր հավաքելու վրա: Նախնական թեստի նպատակն է որոշել մինչ տեսադասը դիտելը Ձեր ունեցած նախնական գիտելիքները: Թեստը լրացնելու համար տրվում է 30 րոպե ժամանակ և 2 փորձ: Ժամանակը սպառվելու դեպքում ընդունվում են հարցերի այն պատասխանները, որոնք նշված են: Եթե որևէ

հարցի պատասխան չեք նշել, ապա այն չի ընդունվում (հաշվարկվում):  
Հարցերին պատասխանել սկսելու համար սեղմեք **Պատասխանել հարցաշարին**, այնուհետև **Start attempt** կոճակները: Հարցերին պատասխանելուց հետո սեղմեք **Ուղարկել և ավարտել հարցաշարը**, այնուհետև կրկին **Ուղարկել և ավարտել հարցաշարը** կոճակը, որից հետո կտեսնեք նախնական թեստից հավաքած միավորները: Դասընթացի մյուս նյութերին անցնելու համար սեղմեք Ձեր հավաքած միավորի ներքևում գտնվող **Back to course/վերադառնալ դասին** կոճակը: Միայն դրանից հետո Ձեզ համար հասանելի կլինեն դասընթացի նյութերը և տեսադասը:

Տեսադասի դիտման ընթացքում ժամանակ առ ժամանակ այն կընդհատվի հարցերով (դրանք պարզագույն թվաբանական հարցեր են, որոնք առաջադրվում են համոզվելու համար, որ փաստաբանը շարունակաբար դիտում է տեսադասը), որոնց պատասխանելուց հետո միայն դիտումը կշարունակվի: Հարցին ճիշտ պատասխանելու համար տրվում է 3 փորձ: Բոլոր փորձերին սխալ պատասխանելու դեպքում, տեսադասը կընդհատվի և այն պետք է սկսեք դիտել նորից: Տեսադասի ընթացքում կարող եք ինքներդ կանգնեցնել տեսահոլովակը և հետո շարունակել դիտումը՝ սեղմելով **play(միացնել)/pause(դադար տալ)/stop(կանգնեցնել)** կոճակները: **Pause(դադար տալ)** կոճակով տեսադասը կանգնեցնելու դեպքում, **play** կոճակը սեղմելով տեսադասը կշարունակեք դիտել այն մասից, որտեղ կանգնեցրել եք դասը, իսկ **stop(կանգնեցնել)** կոճակով տեսադասը կանգնեցնելու դեպքում, **play** կոճակը սեղմելով ստիպված կլինեք տեսադասը դիտել սկզբից: Տեսադասը կարող եք կանգնեցնել միայն ընդհանուր առմամբ 20 րոպե ժամանակով: Հատկացված ժամանակը սպառելուց հետո համակարգն այլևս թույլ չի տա սեղմել **pause(դադար տալ)** կոճակը և տեսահոլովակն առանց դադարի առաջ կընթանա: Այնուամենայնիվ, այս դեպքում տեսահոլովակը կարող եք կանգնեցնել սեղմելով **stop (կանգնեցնել)** կոճակը, որի դեպքում ստիպված կլինեք տեսադասը սկզբից դիտել:

8. Տեսադասը դիտելուց հետո Ձեզ համար կակտիվանա **Վերջնական թեստը**, որը լրացնելու համար կրկին տրվում է 30 րոպե ժամանակ, բայց 3 փորձ: Այս թեստը լրացվում է նույն սկզբունքով, ինչ որ նախնական թեստը, պարզապես այս դեպքում մինչ Ձեր պատասխանները վերջնական ներկայացնելը՝ **Ուղարկել և ավարտել հարցաշարը** կոճակը սեղմելով, կարող եք ձախ կողմում, Ձեր անվան տակ ներկայացված թվերին սեղմելով մտնել համապատասխան հարցերի մեջ և կատարել փոփոխություններ:

9. Պարտադիր վերապատրաստման ժամաքանակ հաշվարկվում է **վերջնական թեստի արդյունքների** հիման վրա: Այսինքն, Դուք լրացնում եք դասընթացի համար նախատեսված համապատասխան վերապատրաստման ժամերը, եթե ստանում եք վերջնական թեստի անցողիկ միավորը:

Վերջնական թեստը ավարտելուց հետո Ձեզ ներկայացվում են Ձեր հավաքած միավորները:

Եթե դրանք անցնում են տվյալ վերջնական թեստի համար նախատեսված անցողիկի շեմը Դուք լրացնում եք դասընթացի համար նախատեսված պարտադիր վերապատրաստման ժամերը:

Հետագայում կարող եք նաև տեսնել Ձեր գնահատականները Դասընթացի էջի ձախ սյունակում **Կառավարում** բաժնում **Գնահատականներ** անվան տակ:

## Ուշադրություն

Յուրաքանչյուր փաստաբան **կիսամյակի** կտրվածքով չի կարող առցանց հարթակով լրացնել պարտադիր վերապատրաստման **4 ժամից** ավելի և **տարվա** կտրվածքով **8 ժամից** ավելի: Նշված սահմանը անցնելու դեպքում լրացված կհամարվեն միայն նախատեսված սահմաններում լրացված ժամերը: